

Համաձայնեցված է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Վ. Գաբրիելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱ ՊԵԿ ՆԱԽԱԳԱՀ
Գ. Խաչատրյան

11 հունվար 2013 թ. N 1

Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն ՈՒ Մ N 1

2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ ՈՒԺԻ ՄԵԶ ՄՏՆՈՂ «ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՄԱՍԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐԶԱԿՈՒՐԴԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ է մտնում 01.01.2013 թ-ից: Նույն պահից ուժը կորցրած են ճանաչվելու «Եկամտահարկի մասին» և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքները:

Մինչև 01.01.2013 թ-ը գործող`

«Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ պետական եկամուտների նախարարության 16.04.2001 թ. N 02/456 հրամանով հաստատված «Եկամտահարկի հաշվարկման և բյուջե վճարման կարգի մասին» հրահանգի 22-րդ և 25-րդ կետերի,

Մինչև 01.01.2013 թ-ը գործող «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության 30.05.2005թ. N 1-05/05-Ն հրամանով հաստատված «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգի 41-րդ կետի 3-րդ, 4-րդ և 10-րդ ենթակետերի,

01.01.2013 թ-ից ուժի մեջ մտնող «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ և 5-րդ հոդվածների, ինչպես նաև ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 07.06.2012թ. N 175-Ն հրամանով հաստատված «Եկամտային հարկի հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգի 41-րդ կետի 3-րդ և 10-րդ ենթակետերի համաձայն`

1. Ամենամյա արձակուրդի համար գործատուն վարձու աշխատողին վճարում է միջին աշխատավարձ, որը հաշվարկվում է վարձու աշխատողի միջին օրական աշխատավարձը տրամադրվող արձակուրդի օրերի թվով բազմապատկելու միջոցով: 5-օրյա աշխատանքային շաբաթվա դեպքում միջին օրական աշխատավարձի չափը որոշվում է` միջին ամսական աշխատավարձը բաժանելով 21-ի, իսկ 6-օրյա աշխատանքային շաբաթվա դեպքում միջին օրական աշխատավարձի չափը որոշվում է` միջին ամսական աշխատավարձը բաժանելով 25-ի:

2. Միջին ամսական աշխատավարձի չափը որոշվում է օրենքով սահմանված կարգով:

3. Այն դեպքում, երբ ձևակերպվում է վարձու աշխատողի հերթական կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում` նախորդ տարվա չօգտագործված արձակուրդը, ապա հաշվարկված արձակուրդային գումարը ներառվում է նրա համախառն եկամտի մեջ որպես այն ամիսների ստացման ենթակա եկամուտ, որ ամիսներին նա գտնվում է արձակուրդում:

Հաշվի առնելով վերը նշվածը, ինչպես նաև «Եկամտահարկի մասին» և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքների փոխարեն 01.01.2013 թ-ից «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելու հետ կապված անցման ժամանակահատվածում առաջացող հարկման հարցերի հստակեցման անհրաժեշտությունը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասով, **պաշտոնապես պարզաբանում են.**

2012 թ-ին առաջացած և 2013 թ-ին շարունակվող վարձու աշխատողի ամենամյա արձակուրդի դեպքերում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և չափով հաշվարկված արձակուրդի գումարները հարկվում են հետևյալ կերպ`

1) 2012 թ-ին կատարվում է հետևյալ հաշվարկը`

ա) 2012 թ-ին վերաբերող ամսվա աշխատավարձին գումարվում է այդ ամսվանը բաժին ընկնող արձակուրդային գումարը և հարկվող եկամտից հաշվարկվում է եկամտահարկը և պարտադիր սոցիալական ապահովության վճարը:

Այդ դեպքում եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գումարները արտացոլվում են 2012 թ-ի 4-րդ եռամսյակի հաշվարկում (հաշվետվությունում):

բ) Վարձու աշխատողի փաստացի արձակուրդային գումարը հաշվարկելու և վճարելու նպատակով 2013 թ-ին համապատասխան ամսվանը բաժին ընկնող արձակուրդային գումարից նախնական կարգով հաշվարկվում է եկամտահարկը՝ «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և վարձու աշխատողի պարտադիր սոցիալական ապահովության վճարը՝ «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

2) Վարձու աշխատողի արձակուրդից վերադառնալուց հետո, 2013 թ-ին վերաբերող ամսվա եկամուտը հաշվեգրելիս՝

ա) վերահաշվարկվում է 2013 թ-ին բաժին ընկնող արձակուրդային գումարը՝ հիմք ընդունելով ՀՀ աշխատանքային օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք) (2013 թ-ի խմբագրությամբ) սահմանված կարգով որոշվող միջին ամսական աշխատավարձի չափը:

բ) 2013 թ-ին վերաբերող ամսվանը բաժին ընկնող վերահաշվարկված արձակուրդային գումարին գումարվում է ՀՀ կառավարության 31.05.2012 թ. N 692-Ն որոշման կարգի համաձայն որոշվող այդ ամսվա աշխատավարձը և հարկվող եկամտից հաշվարկվում է եկամտային հարկը:

Այդ դեպքում եկամտային հարկի գումարը արտացոլվում է 2013 թ-ի եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկ(ներ)ում:

գ) Հաշվի առնելով վարձու աշխատողի 2013 թ-ին բաժին ընկնող արձակուրդային գումարից 2012 թ-ին պահված եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների, ինչպես նաև 2013թ-ի հարկվող եկամտից պահված եկամտային հարկի գումարները՝ որոշվում է վարձու աշխատողի 2013 թ-ին վճարման ենթակա փաստացի աշխատավարձի չափը:

Օրինակ. Կազմակերպությունը աշխատում է 5-օրյա աշխատանքային շաբաթով և վարձու աշխատողների ամենամյա արձակուրդի օրերի քանակը կազմում է 20 աշխատանքային օր: Վարձու աշխատողի համար 2012 թ. դեկտեմբերի 24-ից մինչև 2013 թ. հունվարի 29-ը (ներառյալ) ձևակերպվել է ամենամյա արձակուրդ: Աշխատանքային պայմանագրի համաձայն յուրաքանչյուր ամսվա աշխատավարձը կազմել է 120000 դրամ:

(դրամ)

Ցուցանիշը	Գումարը	Հաշվարկը
Արձակուրդային գումարի հաշվարկը		
միջին ամսական աշխատավարձը	120000	120000 x 12 : 12
միջին օրական աշխատավարձը	5714	120000 : 21
արձակուրդային գումարը	114280	5714 x 20
2012 թ. դեկտեմբեր ամսվա հաշվարկը		
աշխատավարձը	90000	120000 : 20 x 15
արձակուրդային գումարը	28570	114280 : 20 x 5
ԱՎՈՒՄ (ընդամենը)	118570	90000 + 28570
վարձու աշխատողի սոցիալական վճարը	3557	118570 x 3%
գործատուի սոցիալական վճարը	19928	19000 + (118570 - 100000) x 5%
սոցիալական վճարներ (ընդամենը)	23485	3557 + 19928
անձնական նվազեցումը	32500	
եկամտահարկը	8503	8000 + ((118570 - (3557 + 32500)) - 80000) x 20%
2013 թ. հունվար ամսվա արձակուրդային գումարից եկամտահարկի և վարձու աշխատողի սոցիալական վճարի նախնական հաշվարկը		
արձակուրդային գումարը	85710	114280 : 20 x 15
վարձու աշխատողի սոցիալական վճարը	2571	85710 x 3%
անձնական նվազեցումը	32500	
եկամտահարկը	5064	(85710 - 2571 - 32500) x 10%
Վճարման ենթակա 2012 թ. դեկտեմբեր ամսվա աշխատավարձի և 2013 թ-ի հունվար ամսվա արձակուրդային գումարը	184585	118570 - (3557 + 8503) + 85710 - (2571 + 5064)

2012 թ. դեկտեմբեր ամսվա համար հաշվարկված ԱՎՈՒՄ-ի (118570 դրամ) և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գումարները (23485 դրամ) արտացոլվում են 2012 թ-ի 4-րդ եռամսյակի սոցիալական վճարների հաշվետվությունում, իսկ 2012 թ. դեկտեմբեր ամսվա համար հաշվարկված ԱՎՈՒՄ-ի (118570 դրամ) և եկամտահարկի (8503 դրամ) գումարները արտացոլվում են 2012 թ-ի 4-րդ եռամսյակի եկամտահարկի հաշվարկում:

Վարձու աշխատողի արձակուրդից վերադառնալուց հետո, 2013 թ-ին կատարվում է հաշվարկ (վերահաշվարկ): Հաշվի առնելով «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 6-րդ մասի և ՀՀ կառավարության 31.05.2012 թ. N 692-Ն որոշման պահանջը՝ 2013 թ. ամսական դրույքաչափը սահմանվել է 143000 դրամ:

(դրամ)

2013 թ. հունվարի հաշվարկը (վերահաշվարկը)		
Միջին ամսական աշխատավարձ հաշվարկելիս 2012 թ. յուրաքանչյուր ամսվա աշխատավարձին ավելացվող մեծությունը	20000*	19000+(120000-100000)x5%
միջին ամսական աշխատավարձը	140000	(120000+20000) x11:11
միջին օրական աշխատավարձը	6667	140000:21
արձակուրդային գումարը	100005	6667x15
աշխատավարձը	16823	143000:17x2
ԱՎՈՒՄ (ընդամենը)	116828	100005+16823
Եկամտային հարկը	28506	116828x24.4%
Վերահաշվարկման արդյունքում վճարման ենթակա 2013 թ. հունվար ամսվա վճարման ենթակա աշխատավարձը	10247	116828-28506-(85710-2571-5064)

* Միջին ամսական աշխատավարձ հաշվարկելիս 2012 թ. յուրաքանչյուր ամսվա աշխատավարձին ավելացվող մեծությունը որոշվել է հինգ ընդունելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 195-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի պահանջը:

2013 թ. հունվար ամսվա համար վարձու աշխատողին վճարման ենթակա աշխատավարձը կազմում է 10247 դրամ:

2013 թ. հունվար ամսվա համար հաշվարկված հարկվող եկամտի (116823 դրամ) և եկամտային հարկի (28506 դրամ) գումարները արտացոլվում են 2013 թ-ի հունվար ամսվա եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկում: